

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/2

30 հունիսի 2015 թ.

Քննարկվեց «Շատխա ծոեր» ՍՊԸ 18.05.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ 12.05.2015 թ-ի թիվ 5101557 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ Ֆինանսների նախարարի 27.04.2015 թ-ի թիվ 5101557 հանձնարարագրի համաձայն «Շատխա ծոեր» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված), ակցիզային դրոշմանիշերի կիրառման ճշտության և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ 12.05.2015 թ-ի թիվ 5101557 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 9.150.000 դրամ:

Նշվեց նաև, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով 26.05.2015 թ-ին հարուցվել է թիվ 83155715 քրեական գործը, որի շրջանակներում կատարվում է նախաքննություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քննվում է թիվ 83155715 քրեական գործը, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Շատխա ծոեր» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Շատխա ծոեր» ՍՊԸ 18.05.2015 թ-ի դիմում-գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



Ռ. ՄԱՇԿՂՅԱՆ